

ՄԱՍԻՍ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԾԱՐՍԹ ՕՐ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԱԳՐԱՊԵՏ
ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ


ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Գոյնն եւ Դաւաններ
Ռիւսաստան
Եւրոպա

40 Հրուշ
4 Բուլլի
10 Ֆրանք

ՀԱՍՑԷ

Ղալաթիա, Իզմիրի Օղլա Խան, քիւ 3-4



ԺԻՐԷ ՍԻՄՈՆ

ՕՐԻՈՐԴ ՕՏԵԱՆԵՆ

ՆՏՐԸ

ՄԱՏՄԱԶԷԼ ԱՆԹՈՒԱՆԵԹ

Պատմութիւնը կ'աւանդէ որ աննը-
շան մարդուն մէկը՝ իր անունը անմա-
հայնելու նպատակով գեղեցիկաշէն մեհ-
եան մը կրակի տուած էր:

Չենք կարծեր որ Բերայի կրթական
խնա հակառէրը միեւնոյն առաջադրու-
թեամբ շարժած ըլլան օրիորդ Օտեանի
տեղ ու իցէ Անթուանէթ մը բերելով:

Իրենց բարւոք վարչութեան յիշա-
տակը յաւերժացնելու համար ամենե-
ւին պէտք չունէին այս սիրուն անա-
կընկալին և աւելի հակամէտ ենք կար-
ծելու որ այս տարօրինակ ընտրութիւ-
նը ըրած են իրենց բանիբուն անօրի-
նութեանց երկար շարքը գեղեցիկ փառքով
մը պատկերու գաղափարէն դրդուած:

Վասն զի, կը խոստովանինք որ ա-
մեն կերպով արդիւնաւոր պաշտօնա-
վարութեան մը արժանի փունջ մըն է
այս անուանումը:

Փունջ մըն է մանաւանդ անոր հա-
մար որ խնամակալներու երկրներանգ
կենցաղը, սովորութիւնները, պէսպի-
սութիւնները երեւան կը հանէ:

Այն պզտիկ միջադէպը, որուն հե-
տեւանօք օրիորդ Օտեան կը հեռանայ
ահա Բերայի աղջկանց վարժարանէն,
իր շահեկան կողմը ունի իբրեւ ախտա-
նիշ մը այն հիւանդութեան ուրկէ ընդ-
հանրապէս մեր դպրոցները կը տա-
ռապին: Այս տեսակէտով մտածե-
ցինք թէ կ'արժէ զայն հասարակու-
թեան ներկայացնել:

* * *

Օրիորդ Օտեան պատճառաբանեալ
հրաժարականով մը քաշուած էր Բե-
րայի վարժարանէն. արդէն վերատես-

չունի ու միանգամայն հայերէն լեզուի
ուսուցիչ էր հոն և մարդկօրէն՝ հնար
չէր իրեն աղկէ աւելին ըլլալ, երբ Խը-
նամակալութիւնը աշակերտութեան վը-
րայ ամեն ժամ հսկելու պաշտօնն ալ
բեռնեւ կ'ուզէր իր վրայ:

Օրիորդ Օտեանի հրաժարականը՝
դպրոցին մէջ մնացող կարգի կանոնի
վերջին շղջներն ալ մարել կ'սպառնար,
ուստի խնամակալութիւնը զինքը իր
պաշտօնին վրայ պահելու հարկը կը
ճանչնայ:

Այս վայրկեանէն է ահա որ միջա-
դէպը կ'սկսի: Վերատեսչուն հիւ գրաւոր
կերպով մատուցած է հրաժարականը
և ահա դպրոցին ստորագրած պաշտօն-
եայ ըն է որ կուգայ խնամակալու-
թեան բերնէն առաջարկել որ իր պաշ-
տօնը վերստանան:

Օրիորդ Օտեան իրաւամբ կը խորհի
որ չէր կրնար, առանց խնամակալու-
թեան գրաւոր մէկ ղեկուցումին, իր
պաշտօնը վերսկսիլ խնամակալութիւնն
ալ որոշած է ամենեւին նամակ չգրել
իրեն: Ուղղադրութեան սխալ մը ընե-
լէ կը վախնար արդեօք, թէ խնամա-
կալներու յատուկ անախառնութիւնը
կ'արգելէր զինքը նամակ գրելու վերա-
տեսչուն, մը:

Ամեն պարագայի մէջ, յայտնի է
որ օրիորդ Օտեան չէր կրնար այս
վիճակին մէջ, որ այնքան կը հեռա-
նար քարեկրթութեան պայմաններէն,
պաշտօնավարել Արուեստանոցին մէջ:
Վերատեսչուն չի պակսիր Բերայի
խնամակալներուն. եթէ օրիորդ Օտե-
ան կը հեռանայ, ահաւասիկ մատ-
մազէլ Անթուանէթը որ կուգայ անոր
պակասը լեցնել:

* * *

Անթուանէթ. ո՞վ լրած է այս ա-
նունը, ո՞վ է. ուսկի՞ց կուգայ այս օ-
տարունակին. Անթուանէթ մէջ յիշուած բա-
նաստեղծական էսօկն է արդեօք. թէ

մին է այն հարկւրաւոր զուլ երիացի կամ ֆրանսուզի կիներէն՝ որոնք քիչ մը գայեակ , քիչ մը սենեկապահ , ու քիչ մը վարժուհի են . չենք գիտեր :

Ու ասով է որ օրիորդ Օտեան պիտի փոխարինուի . այս հարգէն է որ Աքս-Փոսթալէի թարգմանչին տեղը պիտի բռնէ : Այս . այնչափ միայն որքան ամիս մը ուսուցչի մը տեղը կը բռնէ :

Բայց ինչ կ'ըսէք մանաւանդ սա նամակ գրելու չղիջանող խնամակալներուն . մոռցան որ Օտեան մըն էր իրենց դէմինը . իրենց տուած հարուածը այն ազնիւ աղջկան սիրտը չի ծակեր միայն . այլ անցնելով անկից՝ կուգայ մեր բոլոր հասարակութեան սիրտը խոցոտելու :

Եւ ինչ որ ամենէն աւելի կը տրտնեցնէ զմեզ այն պարագան է որ ոչ ոք թաղ . Խորհրդոյ մէջ արիւթիւն ունեցած է՝ քիչ մը ուշ աշխարհ եկող այս խնամակալներուն յիշեցնելու վերատեսչուհւոյ մը հետ բանակցութեան կանոնները ու ձայն բարձրացնելու անժանօթ ֆրանսուհի մը օրիորդ Օտեանի մը յաջորդ կարգելու որոշման դէմ :

* * *

Այս ընտրութիւնը ամենէն ծանր նախադրեցն է որ ոչ միայն մեր հասարակութեան կ'ուզուի , այլ նաեւ այն մեծ անունին . և այն մեծ յիշատակին՝ որ ամենուս բերնին վրայ , ամենուս սրտին մէջն է : Անոր հեղինակները դիտակցութիւն ունին արդեօք այն տրպաւորութեան որ այս անակնունելի որոշման իմացութիւնը յառաջ բերաւ ամէն կողմ :

Եթէ Բերայի հասարակութիւնը չուզէր որ զգացմանց ազնուութեան , իմացական զարգացման տեսակետով , Պալոյ ամենէն յետաձեռն թաղէն ալ մը առնէ աշխարհի առջև ,

պէտք է փութայ իր թաղային գործերուն համար քիչ մ'աւելի հոգածութիւն ցուցնելու :

Բերայի հայուհիներուն կ'իշնայ մանաւանդ աղջկանց վարժարանի վրայ հսկողութեան բնական պարտաւորութիւնն քիչ մը զգալ :

Քօրէլլոյէն պարի դասը կը հասկընանք , պայմանաւ որ Բերայի տիկիներն ալ քիչ մը լրջու եան պէտքն հասկնան ու բոլորովին ծիծաղելի չի դառնան իրենց ունայնասիրութեամբ :

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ԸՄԳ ԳՊՐՈՑԱԿԱՆ ԿԱՆՆՈՒԹԵԱՆ

Բ

1831 օգոստոս ամսոյն սկիզբները Սամաթիոյ դպրոցը մտայ նախակրթութիւնս աւարտելու . և քերականութիւն սկսելու համար : Դպրոցն եկեղեցիէն բաւական հեռի փողոցի մը մէջ էր , և վարժանէան էր Տիրացու Վրթանէս , որ յետոյ քահանայ ձեռնադրուելով՝ եղաւ Տէր երեմիա Խառօղի :

Տիրացու Վրթանէս , ըստ կանոնի այն ժամանակին , կ'ուսուցանէր քրիստոնէական , գիր , բախամ , քերականութիւն , և օգնական ունէր իրեն Տիրացու Մարտիրոս անունամբ չոր ու նիհար մարդ մը , մականուանեալ Ճըզզըզ , որ Պալաթու Մըթսիին մէկ ուրիշ տեսակն էր , և կ'ուսուցանէր հայերէն ընթերցում և ձայնաւոր :

Տիրացու Վրթանէս՝ զիս քննելով՝ բաւական յաջողակ գտաւ ընթերցման մէջ : «Նա-րե-կին մին-չեւ ո՞ր զը-լու-խը կարդացեր ես(1) , հարցուց ինձ : — Մինչեւ քառասունութինն զլուխը» պատասխանեցի , թէ եւ նոր սկսած էի : — Փէք-աղէկ :

1 Այսպէս ծանր ծանր կ'արտասանէր բառերը :

խայ-թէթ ը-րէ քի չա-փուխ լը-մըն-ցու-նէս աէ քե-րակա-նութիւն պաշ-լա-յէս» :

Երկու երեք օր ետքը Տիրացու Վրթա-նէս ցերեկին պահ մը դպրոցէն դուրս ե-լաւ, կէս ժամէն վերադառնալու խոստ-մամբ: Յանկարծ սրահին մէկ անկիւնէն «ճըզ» ձայն մը լսուեցաւ: Տիրացու Մար-տիրոս զլուխն այն կողմ դարձուց տես-նելու համար թէ ո՞վ էր այդ անհաճոյ ձայնը հանդը. նայն միջոցին սրահին մէկ ուրիշ կողմէն ալ «պըզ» ձայն մը հնչեց: Տիրացու Մարտիրոս իսկոյն ցնակեց ոտքի վրայ ելաւ, և դաւաղանը ձեռքն առնելով սկսաւ ձայներուն եկած կողմերը դիտել. բայց դորձը քանի գնաց՝ տաքցաւ. ան-դիէն «ճըզ», ասդիէն «պըզ», ամէն կողմէ «ճըզ-պըզ»: Տիրացու Մարտիրոս չկրցաւ այլ եւս համբերել. մէկէն ձայներուն ե-լած կողմերն յարձակելով սկսաւ աջ ու ձախ պաւազանի հարուած տեղալ. բայց «ճըզ-պըզ»ը դարձեալ կը շարունակէր: Ժը-խորն աննկարագրելի էր: Վերջապէս դռ-նէն ներս մտաւ Տիրացու Վրթանէս, և աղմուկին պատճառն ու հեղինակներն հարցնելով, Տիրացու Մարտիրոս տասնի չափ տղայք ցոյց տուան իրը սկզբնապատ-ճառ անկարգութեան: Տիրացու Վրթա-նէս «Փա-լա-խան» զոչեց զարհուրելի ձայ-նով մը: Անմիջապէս բերին խոշտանգա-նաց գործին, և նշանակեալ տղայք ու-թական տասնական հարուած ճաշակեցին, զորս կանոնաւորապէս բաշխեց Տիրացու Վրթանէս՝ հիւթեղ ատենաբանութիւննե-րով:

Այս տեսարան չարաթը մէկ կամ եր-կու անգամ կը ներկայանար. բայց ես բարեբաղդաբար առանց փորձութեան կ'անցունէի, թէեւ, ինչ մեղքս պահեմ, ես ուլ կը մասնակցէի անկարգութեան: Տիրացու Մարտիրոս զիս չէր տեսներ կամ չտեսնել կը ձեւացնէր, թերեւս պապուս իշխան (եկեղեցական) լինելուն շնորհիւ:

Սակայն երկար չտեւեց այս բարեբաղ-դութիւն: Հազիւ երեք շաբաթ անցեր էր, և յահ պիւրէր մը եկեղեցւոյ հրապարա-կին մէկ կողմը գոնուած Պուճաք-Պաղի անուն զինեւտունէ մը հրդեհ ծագելով, անմիջապէս ծաւալեցաւ ա՛յն ատիճան

բռնութեամբ, որ անհնար եղաւ առաջն առնուլ. քանի մը թեւերու բաժնուելով՝ մինչեւ հետեւեալ առուր ժամ ինը շարու-նակեց և Սամաթիոյ հայաբնակ թաղե-րուն երեք չորրորդը մոխիր դարձուց 16 ժամու մէջ: Եկեղեցին կրցաւ պաշտիլ, իսկ դպրոցն այրեցաւ: Վեհ Սուլթանն, որ քանի մ'օր առաջ Ագրիանուպոլսէն վե-րադարձեր էր, և զոր երգերով դիմաւորեր էինք(2), պթալով գժապդգ հրկիզելոյ վրայ որք մեծագոյն մասամբ փողոցները մնա-ցած էին, հրամայեց շրջակայ թըբաբնակ թաղերուն մէջ գոնուած պարապ տունե-րը բնակութեան տալ անոնց. հետեւա-բար մեր ալ թուրքի մը տուն վարձելով՝ քանի մ'օր հոն բնակեցանք, մինչեւ որ հայրս Պալատու թաղին մէջ յարմար տուն մը գտաւ և հոն փոխադրեց զմեզ:

Վերստին գնացինք Պալատու վարժոցը, բայց այս անգամ հայրս զիս դպիր (տի-րացու) դրել տալով Մինէճի տիրացու Յօ-հաննէսին սրահը նստիլ սկսայ: Տիրացու Յօհաննէս հեղահամբոյր մարդ մ'էր, սիրտն ալ ձայնին և երգեցմանը պէս քաղցր: Ար-դարեւ երբեմն նա ալ թաթի-հարուած կը բաշխէր իրբեւ նուիրական պարտակա-նութիւն, բայց մեղմով և ոչ խժդժաբար: Իւր կշտամբական բառերը կամ յիշոցներն էին «նզովից արմատ և նեղան ծնունդ», ինձ համար յատուկ ածական մ'ալ ունէր՝ «կամապաշտ» բառը, զոր «նեղան ծը-նունդ»ին վրայ կ'աւելցունէր, և պատ-ճառն ալ այս էր որ ես դպիր կամ ձայ-նաւոր լինելու փափաք չունէի, հակառակ ջերմ բաղձանաց հօրս, որ ամէն առաւօտ, ամառ, ձմեռ, անձրեւ, ձիւն չնայելով, ժամկոչին գալէն անմիջապէս յետոյ զիս անուշ քունէս կ'արթնցունէր, և տաքուկ անկողնէս հանելով եկեղեցի կը տանէր, սրպէս զի անպատճառ տիրացու լինէի: Արդիւնքն այս եղաւ որ թէպէս չկրցիլաւ տիրացու լինել, բայց եկեղեցական ամէն

2 Տէտէ-Սկանէն շոգենաւ նստելով՝ Սուլթան Մամուտ կայսրն այնպէս վերադարձաւ ի Պոլիս՝ յապշուեթիւն ժողովրդեան, որ առաջին անգամ կը տեսնէր առանց խաղաղաստի ինքնընկաց եւ նրաշունչ անուտեղ անեղ նաւ մը իրբեւ զար-մանաբանչ հրաշալիք:

երգերը, շարահանները, սաղմոսները, քա-
րոյներն ու մալթանքները, նոյնպէս Ա-
ւետարանները, մարգարէութիւնները, ա-
ռաքելոց գործերն ու թուղթերն և այլ
ամէն ընթերցուածները մեծաւ մասամբ
բերնուց սովորեցայ, և մինչեւ այսօր չեմ
մոռցած, այնպէս որ եթէ հայերէն բառի
մը կամ զրուցուածի մ'օրինակ բերել ու-
ղեմ, քանի մը հատ մէկէն կը ներկայա-
նան յիշողութեանս, և ամէն անգամ
կ'օրհնեմ հօրս յիշատակը:

Հետեւեալ տարւոյն մէջ, այն է 1832
ին, Պալատ և Ֆէնէի մէջտեղի բար-
ձանց վրայ գտնուող Գանլը-քիլիսէ թա-
ղին մէջ ազգային նոր դպրոց մը(3) բաց-
ուած լինելով, ուր քերականութիւն ալ
գաս կը տրուէր, հայրս զիս հոն զրկեց:

Վարժապետն էր՝ Տիրացու Մանուկ
«Սարը» մականուանեալ, որ քրիստոնէա-
կան, գիր, րախամ և քերականութիւն
կուսուցանէր, օգնական ունենալով իրեն
Մինէճի տիրացու Թադէոս (եղբայր Մինէ-
ճի Տիրացու Յօհաննէսին) անուն սարկա-
ւագ մը, բարեսիրտ և զուարթաբարոյ
մարդ, զոր աղայք կը սիրէին աւելի քան
թէ կ'ատէին: Ընկերութեանց մէջ շատ
հաճելի էր իւր զուարճաբանութեամբը,
քթովը վաղակ (զուռնա) կը հնչեցունէր
բաւական յաջողութեամբ:

Տիրացու Մանուկ մեծ համարում ու-
նէր իւր վրայ. իրեն պէս հմուտ քերա-
կան չկար Հայոց ազգին մէջ. «Բերական-
ութեան կանոնները (ըսպէպիի պէս սա
ճէպիս մէջն են» ըսելով՝ ձեռքը գրպանին
կը զարնէր պանծանքով: Եւ արգարեւ ջու-
րի պէս բերնուց գիտէր ամէնն ալ, բայց

3. Անմահ յիշատակաց տրժանի Պէզնեան Յա-
րութիւն Ամիրան, զոր ժողովուրդը «Վարպետ
Ամիրայ» կը կոչէր, մայրաքաղաքիս այն ամէն
հայաբնակ թաղերուն մէջ՝ ուր եկեղեցի չկար
(ընդ ամէնն հինգ եկեղեցի կար Պոլսոյ մէջ),
դպրոցներ կ'առուցանելով՝ մէկ մէկ էսնաֆնե-
րու խնամոց յանձնած էր, ոմանց ալ մեծագու-
մար զրամ կտակած: Ամէն գլխաւոր էսնաֆ
զպրոց մը կը պահէր: Գանլը-քիլիսէի դպրոցն
ալ, յանուն Ս. Առաքելոց կառուցեալ, հայ գի-
նեպանաց էսնաֆին յանձնուած էր, ծովահայ-
եաց եւ ընդարձակ պարտէզով շէնք մը, որուն
եւ ոչ իսկ տեղը մնացած է այսօր:

երկու տող անսխալ հայերէն չէր կրնար
գրել, ինչպէս հասկըցանք վերջէն: Այսու
հանդերձ բանաստեղծ կամ մանաւանդ
տաղաչափ ալ էր, ոտանաւորներ կը գրէր
զրաբառ և աշխարհիկ լեզուներով: 1831
տարւոյն մէջ ահագին կարկուտ մը տե-
ղաց Սամաթիոյ հրդեհէն 15-20 օր վերջը,
մէն մի հատերն ընկուղի խոշորութեամբ,
տուններուն պատուհաններն ապակի չմը-
նաց խորտակեցան. ծառերը ճղակնտոր
եղան, բազում ոչխարք մեռան, շատ ալ
մարդիկ վիրաւորեցան:

Տիրացու Մանուկ այն կարկուտին նը-
կարագրութիւնն ըրած էր զրաբառ ոտա-
նաւորով մը, որուն առաջին քանի մը
տողերը միայն կը յիշեմ.

Հազար ու ճ հարիւր երեսուն մէկին,
էր Սեպտեմբերի քսանուերկուրին,
Պատմեմք զհարուածն եղեալ ահագին:

Աշխարհաբառ ոտանաւորի մէջ ալ ոչ
նուազ ճարտար էր:

Աւասիկ անոր ալ մէկ նմոյշը, որ
գինովի մը նկարագիր էր.

Աւտըանց կ'ելլայ տօշեկէն,
Հիշ ֆարդը չունի էշեկէն,
Ձէհիւր վազելով երեսէն,
Հէմէն կը ցատկէ էշիկէն:

Մնացեալը լաւ չեմ յիշեր:

Տիրացու Մանուկ տարիի մը չափ քե-
րականութիւն գաս տուաւ մեզ՝ Փէշտը-
մալճեան Գրիգոր պատուելիի յօրինած
զրաբառ քերականութեան վրայ, որ ժա-
մանակին լաւագոյն դասագիրքն էր: Իւր
ամենէն մեծ փառասիրութիւնը խրթին
բառեր և անսովոր բարբութիւններ ու-
սուցանել էր, որպէս զի ուրիշ դպրոցնե-
րու մէջ քերականութիւն ուսանող տղա-
ւոց հետ վիճարանելով՝ յաղթահարէինք
դանոնք: Տեսալ մ'աքաղաղներու կոխ,
զոր շատ կը սիրէին մեր հայրերն: Երբ
երկու տարբեր դպրոցի աշակերտք զիս-
նաձուով մէկ տեղ գային, հայրերնին խ-
կոյն կ'ըսէին իրարու. «Կէլ չունեալը չա-
թը շտըրալըմ, պաղալըմ հանկըմ զօւլու
տըր:» Եւ կը հրամայէին իրենց սրբոց
որ վիճաբանին, թէեւ իրենք բան մը չէին
հասկնար:

Մեր դպրոցին ամենէն հզօր զէնքերն էին քանի մ'անսովոր բառեր, որոց մէկ երկուքը միայն կը յիշեմ:

Աւասիկ մեր հարցման ձեւը.

«Ըստ մասանց բանի զի՞նչ է բառս չրթնաղթայաչար:» Խեղճ հակառակորդնիս բնականաբար կը տկարանար պատասխանելու: Յայնժամ ուրիշ բառ մը կը հարցնէինք յաղթապանծ խրոխտանօք.

«Ըստ մասանց բանի զի՞նչ է բառս բշխորիկ» . մարդարէ լինելու էր մէկն, որպէս զի գուշակէր թէ այդ բառ ականջ մաքրիչ (հիւլալ) կը նշանակէր:

Անհնար է նկարագրել մեր հարց դժգոյս ուրախութիւնն երբ կը տեսնէին մեր այս հակայաքայլ յառաջդիմութիւնը քերականական բարձր դիտութեան մէջ: Աւելորդ է ըսել թէ մեր մեծամտութիւնն ու յանձնադատտանութիւնն ալ ոչ չափ ունէր ոչ սահման, շնորհիւ մեր անզուգական Մանուկ վարժապետին, որո, քերականական անգնդախոր հմտութեանն հաւտարող ուրիշ վարժապետ չկար Պոլսոյ մէջ:

Բայց, աւագ, մեր այս փայլուն յաջողութեան միջոցին՝ յանկարծ Տիրացու Մանուկ ճանրուեցաւ դպրոցէն, և ցաւօք սրտի հարկադրեցանք վերադառնալ Պալատու դպրոցն, ուր դիտութեանց ուսուցիչ կարգուած էր այն օրերը Տիրացու Աւետիս Պէրպէրեան:

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՄԵՐ ՊԱՏԿԵՐԸ

Ժ Ի Ի Լ Ս Ի Մ Ո Ն

Եօթանասուն և իննամեայ ծերունի մ'է, բայց այնպիսի ծերունիներէն որոց համար մանաւանդ Գաղիա պարտի փափաքիլ որ «ծեր ի տանէ իւրմէ մի՛ պապականեացի»: Արդարեւ Ժիւլ Սիմոն Գաղիոյ մեծազոյն փառքերէն մին է իւրեւ փիլիսոփայ-մտաեկեղծ, այլ մանաւանդ մեծազոյն լոյսերէն մին, կամ ա-

մենամեծ լոյսն այսօր իւր բարոյական ու ընկերական կեանքի ընթացքին մէջ:

Հին մեծ գէմբերուն վերջին մնացորդն է, այն զրական ու քաղաքական անձնաւորութեանց որք կիզօ, Լամարթին, Հիւկօ, Թիէռ, Բիենէ, Բէլգամն կը կոչուէին, ու հզօր հաւատք մ'ունէին մարդկային սեռի վեհ ճակատագրաց վրայ, և քաղաքակրթութեան վսեմ աւելորդ մը, միջադրական բարոյականութեան ու քաղաքական իմաստութեան օրինակելի տիպար մը կ'ուզէին ընել իրենց հաւենիքը: Որչափ աւելի կ'զգայ մարդ այսօր առօրեայ մեծութիւնը, երբ դիտէ թէ զրական նախապաշտ փիլիսոփայութիւն մը և բնապաշտ անխեղ զրականութիւն մը անհատական և ընկերական բարոյականի ինչ տխուր սկզբանց առաջնորդեցին, երբ դիտէ Բանամայի տուածին ի վեր հանած բարոյական գիտակցութեան թիւրումները, հանրային մարդոց խղճին մամոնայի հետ մեղապարտ դաշնաւորութիւնները:

Իտէալի մարդիկ էին անոնք և յայն ամէն եղանակաւ, հանրային ու զրական գործունէութեամբ, կը մղէին՝ դժողիւ: Իտէալ ըսելը կրօնք ըսել է, կրօնք ըսելը բարոյական ըսել է: Ահա՛ ինչու համար անխեղ իրապաշտ զրականութիւն մը հարկաւորապէս անբարոյական զրականութիւն մ'է: Սկեպտականութիւնը, որ այսօր կը կարծուի զօրաւոր մտքի մը նըշանը ըլլալ — մինչդեռ, ըստ Ֆիլիպէի, հասկընալու և թափանցելու անկարողութիւն կը յայտնէ մանաւանդ —, անձանօթ էր այդ հաւատքի մարդոց: Կ'ընդունէին դասական կրօնքներու բոլոր տարազները, մարդկային մտքին վրայ — հարկադրած բոլոր խորհուրդքն ու վարդապետութիւնները. — անշուշտ ո՛չ, բայց ի՞նչ փոյթ. բոլոր այդ տարազներուն ու խորհրդանշանաց տակ բուն կրօնքը կայ, մարդկային սրտին ու բանականութեան դաւանած կրօնքը, որ ամէն կրօնից ոգին է ու ամենուն հիմն, առանց որոյ չպիտի կենար ո՛չ մէկ զրական կրօնք, և որ հասարակաց է կրօնքներուն ու փիլիսոփայութեան: Ահա զայդ ունէին. կը հաւատային Աստուծոյ, կը հաւատային մար-

գուն աղնուական ճակատագրին, բարոյական օրէնքին, յառաջդիմութեան, հոգւոյն անմահութեան: Ըսել չենք ուղեր անշուշտ թէ այսօր Գաղիոյ մէջ ամէն ինչ նիւթապաշտ ու զրականամիտ եղած է. ո՛չ, Գաղիան այսօր ալ ունի հոգեպաշտ փիլիսոփայից ընտիր խումբ մը, որոյ մէջ Բօլ ժանէ, Հանրի ժօլի, Ալֆրէտ Փուլէ, Հանրի Մարիոն, Ռաֆէսօն և դեռ ուրիշներ պատուաւոր տեղ մը կը գրաւեն, և Գաղիոյ պաշտօնական փիլիսոփայութիւնը (եթէ այս երկու բառերը կրնան իրարու հետ հաշտուիլ) միշտ հոգեպաշտական եղած է. բայց սա անոյգ է թէ վերջին ժամանակներս գրականութիւնը չափազանց ազդուեցաւ սկեպտիկ ու նիւթապաշտական տեսութիւններէ և թէ բարոյականը թերեւս չափազանց նկատուեցաւ իբրեւ կարի միամիտ բան մը, ու նոյն իսկ Գաղիան վարող մարդերու ըսկզբունքներուն մէջ սկսաւ չունենալ այլ եւս իւր մեծ դերը:

Այդ բարոյական բարձր տեսականին, հոգեպաշտ բարոյականացուցիչ փիլիսոփայութեան հզօր ախոյեան՝ հին հսկայ մարդիկներէն կը մնայ Ժիւլ Սիմօնը, որ չի դադրիր պաշտպանել մարդկութեան յաւիտենական կրօնքին դատը և գաղիական մտքին ու բարուց մոլորումներուն մէջ փայլեցնելէ առողջ իմաստասիրութեան մը փրկաւէտ լոյսը, հեռատես ու փորձառու ծեր նաւապետի մը պէս լսելի ընելէ իւր ձայնը, մատնանի ընող նպատակն ու ազդարարող խորշիկ խոսքերն ու վիճերն: Ժիւլ Սիմօն անդամ է Գաղիական Ակադեմիային, ինչպէս նաեւ բարոյական ու քաղաքական գիտութեանց Ակադեմիոյ. մշտնջենաւոր անդամ է Մերակոյտի Ժողովոյն: Փայլուն աշակերտ Վիկտոր Գուլէնի, վարդապետ ի փիլիսոփայութեան 1839էն, աւանդած է իմաստասիրական դասեր, մանաւանդ էգօլ Նօւմալի և Սօնպօնի մէջ փիլիսոփայութեան պատմութեան վրայ իւր դասախօսութիւնը նշանակելի ու անմոռաց ըրած են իւր ուսուցչապետական շրջանը: 1855էն բազմիցս հրաւիրուեցաւ Պելճիքա, ուր գլխաւոր աղաքաց, Կանտի, Լիէժի, Անվէրսի մէջ

խօսեցաւ փիլիսոփայութեան դասեր ուր բուռն ոգեւորութիւն յառաջ բերին: Գրեթէ միշտ անդամակցած է Գաղիոյ Ազգային Ժողովոյ իբրեւ ազատական երեսփոխան և նշանաւոր ատենաբան Բան խօսցած: Հանրային կրթութեան բարեկարգութիւն, գործաւոր կանանց վիճակ, մամուլ խնդիր, մահուան պատժոյ ջրնջում, այսպիսի դատեր էին անոնք զորս կը պաշտպանէր այս տրիբուն: Եղաւ նաեւ 1870է մինչեւ 1873 Հանրային կրթութեան նախարար, առաջին հզօր զարկերէն մին տալով նախակրթութեան մանկավարժական կազմակերպութեան մեծ գործին, զոր աշխբան կը սիրէր «Դպրոց»ի հեղինակն:

Ինչ որ այլ փիլիսոփայ մատենագրաց մէջ կը յատկանիշէ զԺիւլ Սիմօն, և անոր դերը գերազանցապէս շինիչ կը հանդիսացնէ՝ ա՛յն է թէ նա չբաւականացաւ ուսումնասիրելով միայն իմաստասիրական խնդիրները: Զասոնք խորունկ քննեց ու մշակեց որչափ ո՛ր և է մեծանուն փիլիսոփայ, ինչպէս կը վիային իւր զուտ ուսումնասիրական երկերն, «Զմեկնութենէ Պրոկլետի ի վերայ. Տիմէայի Պլատոնի, Ուսումնասիրութիւն ի վերայ աստուածգիտութեան Պլատոնի և Արիստոտելի, Պատմութիւն Աղեքսանդրեան դպրոցին» և իւր զանազան յօդուածք «Ռեպլի տէ տէօ Մօնտ»ի և Ֆռանքի «Փիլիսոփայական բաւարան»ին մէջ. բայց մանաւանդ ուզեց ժողովրդականացնել իմաստասիրական գիտութեան ճշմարտութիւններն ու փաստերն, մասնաւորապէս ա՛յնպիսի խնդրոց մասին որոց լուծումէն կախում ունի ժողովրդոց կեանքի բարոյական ուղղութիւնը: Բեղմնաւոր գաղափար, որոյ արդիւնքն եղան իւր՝ ի մէջ այլոց՝ «Բնական կրօնք, Պարտականութիւն, Խղճի ազատութիւն» անուն սքանչելի մատենանք, որք իմաստասիրական հաւատքի մը և վրսեմ բարոյականի մը, որ ոգին իսկ է Աւետարանին, սկզբունքները կը պարզէ հրապուրիչ կենդանի ոճով ու պարզ դիւրամատոյց տրամաբանութեամբ, բանականութեան կոչում ընելով աշխբան որչափ սրտին, խորշելով նուրբ զգուարմ-

բըռնելի վերացումներէ և ի բաց մերկացած գիտական բառերու և ձեւոց խրատեցոյիչ հագուստը : Մէկ մէկ Աւետարան իրենք ալ այս երեք ոսկեմատեաններն , երեք կազմութիւնէն ազդեցութիւններ որք հաւատոյ ծարաւի հոգիները կը զովացնեն , երեք ըյոյսեր որք մութի մէջ թարթափող բերելու ցոյք մը կը ցուցնեն : «Պարտականութիւն»ը թարգմանուեցաւ յունարէնի , և «Բնական կրօնք»ը՝ անգղիերէնի : Իւրայս գործերով ժիւլ Սիմոն քահանայի վեհաթիւն մը կ'զգենու յաչս աշխարհի :

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

«Մասիս»ի խմբագրապետն ինէ «վրէժ լուծելու համար» ընտրած է միջոց մը յոյժ աղնուական , իմ փանաքի կարողութեանցս համար յոյժ պատուաբեր : Իրեն ուղղեալ նամակի մը մէջ՝ վշտի մ'արտայայտութեան նուիրուած՝ ներփակած էի Հունիկին հետ ոտանաւոր խօսակցութիւն մը , որպէս հոգւոյ պէտք մ'է ինձ ընել երբ երբեմն : Հունիկերգութեանս այդ երրորդ դրուագը ձօնած էի Տիրան Քելէկեան բարեկամիս , որ՝ մօտէն ճանչցած ըլլալով անմահ գրաշարն՝ «յուզուած էր շատ» Հունիկին ուղղած միւս ոտանաւորներէս : Զօհրապ ու Քելէկեան էֆէնտիներն հրդեհէն առաջ իրարու դրացի գտնուելով , Զօհրապ էֆէնտիէն խնդրած էի որ Քելէկեան էֆէնտիին յանձնէ զրոյս մէջ ներփակ բանաստեղծութիւնն : Երբ «Մասիս»ի խմբագրապետն հաւանութիւնս ուզեց՝ բանաստեղծութիւնն հասցէին ա'յն միջոցաւ յղելու որ «իւր վրէժն ինէ լուծելու պիտի ծառայէր» , չընդգիմացայ բողբոլին , որովհետեւ Փրիգոր Զօհրապ երեք անգամ տունս եկած էր «Մասիս» շաբաթաթերթին աշխատակցութիւնս խնդրելու համար :

Ոտանաւորիս սկիզբն հրատարակած հատուածի մը մէջ համարձակ , տենդոտ , հոծ , որպէս է զրոգին անձն իսկ , «Ապ-

սիս»ի խմբագրապետը տարիէ մ'ի վեր իմ «գործունէութեանս դատարը» , կ'սմ մէկ բառով , բառերուն ամենէն ժխտականովն , իմ անգործութիւնս ինձ կը կշտամբէ : Ո'չ թէ պարտք մը կատարելու համար , — մամլոյ նկատմամբ այլ եւս պարտական չեմ դգար ինքզինքս , — այլ արդի մարդուն յատուկ իմացական պէտք մը լեցնելու համար , կուգամ «վերլուծում» ընել «իմ անգործութեանս» : Վերլուծմանս առարկայն երբ իմ անձս կամ իմ կեանքս է , հաճոյքն ինձ համար կրկին է . — ո'չ ապաքէն վերլուծումը քայքայում է . և ո'չ ապաքէն քայքայումն իմ հոգիիս անձկագոյն տենչն և իմ մտքիս մեծագոյն պէտքն է . և ո'չ ապաքէն վերլուծելի ծանօթ առարկայից մէջ ինձ ամենէն ծանօթն իմ անձս է , որ բազում առարկայից վրայ բազմադրութեան առաւելութիւնն ունի , չահեկանութեան առաւելութիւնը լռեկեայն իմացութեւ լով :

Սկսինք ուրեմն վերլուծել մեր «անգործ» կեանքն :

Ա.

Յորմէ հետէ կորուսի ընտանեացս վերջին անգամն — որ առաջինն էր կարեւորութեամբ , — յորմէ հետէ կորուսի մայրըս , տանս բոլոր հոգերն ես ստանձնած եմ , հա'րկ թէ հաճոյք . թէ՛ հիւանդութիւն : Ինչ որ Ալիշան՝ Արփիարեանի յայտնութեանն համեմատ՝ իր միայնակեացի խցիկին համար կ'ընէ , նոյնն ես կ'ընեմ միայնակեացի բնակարանիս համար , որոյ պահանջած ուրիշ ծառայութիւններն ալ ի կարգին կը կատարեմ բոլորն ալ : Ամենէն արձակունակ այդ աշխատութեանց մէջ ի'նչ ձեւափոխութիւններ կը կրէ գրական մարդն , ի'նչ գեղեցկագիտական սկզբանց կը համաձայնեցնէ տան կոպիտ ծառայութիւններն , ո'րն է ծառային հոգեբանութիւնն , առ Բիւզանդ Քէչեան թղթակցութեան մը մէջ մանրամասնած եմ ժամանակաւ այս ամենն . ի'նչ որ այս տեղ ունիմ ըսել , ա'յն է թէ , գնդերային այն աշխատութիւնը՝ զոր հանապազօր կը կատարեմ՝ համոզման քարոյական ոյժէն զատ «նիւթակա'ն» ոյժ մ'ալ կուտայ (ե-

թէ կրնամ այսպէս բացատրել) քարոզութեանցս ու դասախօսութեանցս, երբ իմ յօրինած բառովս՝ մտաւոր «չարավաստակութեան» դէմ կը խօսիմ և զնոքեաց մըլ տօրեայ կանոնաւոր աշխատութեամբ բարեխառնեալ իմացական աշխատութեան բարիքներն ի վեր կը հանեմ: Անոնց որք ինձ յիշեցնեն բերնէս լսուած խօսք մը, թէ «ի՛նչ դառն հաճոյք կը զգայ մարդ մի առ մի ժամերն անդունդին մէջ նետելով, անոնց պիտի պատասխանեմ թէ՛ հայ ընկերութիւնն հեռի է դեռ անձնական երկուութեան պարզ ծանօթութիւնն իսկ ունենալէ, և թէ լաւագոյն է յիս ապրող երկու անձերէն զանի՝ միայն յայտնել՝ որ կը շօշափէ մեր ընթերցողաց մեծագոյն մասին յղացումներն:

Բ

Այս անական հոգերն... յիշեմ մէկ քանին՝ անոնց համար որոնք դադարաւ չունին բնաւ նիւթական աշխատութեանց վրայ՝ վաթնավաճառս՝ որ կենդանի այգազարթոյցս է՝ երբ դուռը զարնէ ամուր ամուր ըստ պատուէրիս, պէտք է ցատքել անկողնէս, վար վազել իրիկուընէ ձեռքս լրացած կաթնաս դուռը վաղցնել ոգհնոցին վրայ դնել և իջնել պարտէզ հորէն ջուր քաշել՝ հորին մէջ միտաւելով գէթ պատկերն... անձնասպան մօրաքեռաղջկանս... զանց կ'ընեմ յիշել ուրիշ աշխատութիւններս: Այս տնական հոգերը կ'ընէի համեմատաբար կարեւոր ժամանակ մը կ'առնեն. այլ «անգործութեան» դեռ շատ ժամանակ կը թողուն միայնակեացին: Այդ ժամանակին մեծ մասն ընթերցման կը դոհեմ: Կը կարդամ Հանդէսներէն՝ «Բազմաժյուղ», «Ամսօրեայ Հանդէս», «Արեւելեան Մամուր», «Ծագիկ», «Մասիս», և օրաթերթերէն՝ «Արեւելք» և «Հայրենիք»: Աւելորդ է ըսել թէ մեր սրբերական հրատարակութեանց մէջ զանց կ'ընեմ թարգմանութիւններն ընդհանրապէս եւ թարգմանօրէն՝ խմբագրութիւններն առ հասարակ. անոր սիրտարէն՝ մերթ երկու, երեք անգամ իսկ կը վերածնեն ինքնատիպ արտագրութիւններն: Իսկատիպ մեր գրողներուն մէջէն յաւէտ երկիւղածու-

թեամբ կը կարդամ Սիպիլն. ահաւասիկ գրագէտի տիպարն. յուզող, քանդի յուզեալ է իր սիրտն. համոզող, քանդի համոզեալ է իր միտքն. ներգործող, հոգիներու վրայ տեւական ներգործութիւն ունեցող, քանդի ճամարտութիւնն է միայն իւր հոգւոյն հրայրքն: Ի՛նչ որ ճամարտութենէ վեր է Սիպիլին համար, գեղեցիկն է այն, որ սակայն այնքա՛ն կամ աւելի ճիշդ՝ այնպէ՛ս վեր է ճամարտութենէն, որպէս ցոլացումն վեր է լոյսն... Ո՛հ, մի՛ գաք ուղղել խօսքս, մի՛ գաք կրկնել տափակօրէն դասական պատգամն թէ՛ «ճշմարտին ցոլքն է գեղեցիկն»: Ո՛հ, գեղեցիկէն վեր ոչինչ կայ, բայց միայն ինչ որ ըստ Լիդուէի գեր ի վերէ մարդկային մտաց հասողութենէն, Աստուած, — զոր ես չը պիտի դաւանէի եթէ ամեն բանէ առաջ չը լինէր գեղեցիկ: Իսկ ճամարտութենէն վար, Սիպիլին համար և ամեն ճամարտ գրագէտի համար, կայ... տիղմն ուր կը թաթաւին աւաղ՝ մոտաորապէս մեր ամենէն օժտեալ գրողներէն ոմանք, որոնք կը նոսաստանան՝ մինչև գրաւորիչի դեր կատարելու աստիճան: — Աւելորդ կը համարեմ՝ ըսի՝ յայտնել թէ զանց կ'ընեմ մեր օրագրաց մէջէն «մկրտի գործ» եւ զողարտագրութիւններն. այլ աւելորդ չեմ համարիր շեշտել որ, մինչ մեծահարուստ մեծաթիւ անձինք աւանայ կը վճարեն լրագրաց բաժանորդագիրն, ես ամենէն աւելի յօժարութեամբ կը հատուցանեմ այդ կարգի պարտականութիւններս: Վճարեմա՛մբ կը կարդամ վերեւ յիշած բոլոր թերթերս՝ ոմանց տարիներով աշխատակիցն եղած ըլլալով հանդերձ, ես՝ որ չարաթիւ անգամ մը միս կ'ուտեմ: Պարբերական հրատարակութեանց ընթերցմանէն զատ, գրեանց ընթերցումն ունիմ: Պէտք է խոստովանիմ սակայն թէ, ժամանակէ մի՛ վեր համեմատաբար շատ քիչ գիրք կը կարդամ: «Համեմատաբար» կ'ըսեմ, որովհետեւ ատենով հզօր ընթերցող մըն էի. այն աստիճան մինչ զի Հասպիւղի անմահ քարոզիչն՝ որ յաճախ կ'այցելէր մեր տունն և կը տեսնէր թէ որչափ կը կարդամ և ի՛նչ գրքեր կը կարդամ՝ էստեանց տունն ներկայացնելով զիս աւանաւոր անձի մը:

լսաւ. «Մեր ազգին մէջ ամենէն չափ կարգացող մարդն է այս տղան՝ Տերոյենց պատուելիէն հորքը:» Հիմայ քիչ կը կարգամ, որովհետեւ... մէկ բառով ըսեմ, այս անգամ ոչ ամենէն ժխտական այլ ամենէն մոլթ և ամենէն անգուլթ բառովն ըսեմ, որովհետեւ... «յոռետես» եմ, «յոռետես» եղայ: Պատանեկութեանս ինչ որ կ'երազէի ոչ իմ անձիս համար, ոչ իմ ազգիս համար, այլ ընդհանուր մարդկային ազգին համար, այո՛, երազ մնաց, և՛ նախընթացն հետեւորդէն եթէ կրնայ գուշակուիլ՝ երազ պիտի մնայ: Դարուս ամենէն մեծ քանակազէտն՝ որ հիմնադիրն ալ եղաւ՝ ամենէն հաստատուն իմաստասիրութեան և ընկերաբանութեան՝ ինչ կը նախատեսէր զիտէ՞ք դարուս սկիզբն. — թէ ճարտարարուեստական շրջանին մէջ ուր թեւակոխած էր մարդկութիւնը՝ վերջ պիտի գտնէին պատերազմունք. Լիդուէ՝ Օկիւսդ Գօնդի մեծագոյն աշակերտն որ վարդապետին ընկերաբանական նախատեսութիւններն աւելի քանակազիտական նկարագրով մը՝ եթէ հնար է՝ կը ներկայացնէր «նասիօնալ» ի մէջ, ի մէջ այլ ուսումնասիրութեանց հաւաքածոյից՝ որպէս են իր գրքերն՝ հաւաքեց նոյն «նասիօնալ» յօդուածներն, և այն անկեղծութեամբ որ կը յատկանշէր այն «աշխարհական սուրբն» իւր գրեթէ մէն մի լատես յօդուածին հերքումն հրատարակեց յօդուածին ներքեւ: Այդ գրքին ընթերցումն աղիտաբեր եղաւ հոգւոյս ու մտացս համար. — ոմանք չարանախանձ հոգիք վերջերս հասարակութեան հաւատացնել ուղեցին թէ «ապուշ» եղած է Եղիա Տէմիրճիպաշեան: Ապուշ անգամ մը միայն եղայ Կեանքիս մէջ, քանի մը օր, այլ դժոխքի օրեր, սարսափելի օրեր. այն ժամանակ էր երբ կարդացի իր իստփալութեան վարպետիս այն գրքն, ուր Սբենսէյէն յետոյ դարուս ամենէն տիեզերական հեղինակն՝ իր վարպետն և ինքզինքը կը հերքէր այնքան դառն եղանակաւ. մտքին մէջ Երեւնայի մը դադարման զգայութեան նման զգայութիւն մ'ունեցայ, և արդէն մնայլ հոգիս անհուն չըղձիկի մը թեւոց ներքեւ զգացի յետ այնու-

րիկ: Աչքս գրեթէ գոց անցեալներն այն գիրքն հանեցի գրատունէս՝ Գառնիկ Փրնտըրբեան բարեկամիս փոխ տալու համար. և երբ իմացայ թէ այրած էր այն, անբացատրելի զգացում մ'ունեցայ՝ որուն բառը չեմ գտներ մարդկային լեզուին մէջ: Այրածն այն գիրքը չէր, որուն համար երկնային ձայնը գոչած էր «Ա. և կարգա»: Պատանաց գիրքն էր որ այրեցաւ, Օտեանի բառերով՝ սոսկալի՝ պատրանաց: Այդ գրքին ընթերցումն, այո՛, աղիտաբեր եղաւ հոգւոյս ու մտացս համար. և այն ժամանակէն ետքն հետզհետէ աւելի քիչ կարդացի. և ինչ որ կարդացի, ակամայ կարդացի: Հոգեկան էութեանս այս անսահման սասանման և իմ այս անսահմանելի կացութեանս մէջ ինչ որ լիովին անտանելի կ'ընէ ինձ կեանքն, ամայութիւնն է որ շուրջս կը տիրէ, հրապարակի վրայ պակասութիւնն է՝ մոտաորական բարձրագոյն աղնուական չահագրգռութիւններ ունեցող մարդոց: Ես ինչ կ'ըսեմ, իմ պատուական՝ եղբայրակիցներս ինչ կը հասկնան. ես ինչ եմ, անոնք զիս ինչ կ'երեւակայեն: Վա՛հ, վա՛հ... Վերադառնալով մեր նիւթին, որովհետեւ ընթերցումներու վրայ կը լիծուէի, զանոնք սահմանափակած եմ գրեթէ միմիայն դառազրոց մատենադարանի մը մէջ. — քանզի իմ «անգործութեանս» մէջ դասեր ալ կու տամ, և ազգային ամենէն մեծ կրթական հաստատութեան մէջ:

Գ

Տնական հոգերէս և ընթերցումներէս անցնելով դասերուն, պիտի յայտնեմ թէ Ազգային Կեդրոնական վարժարանին երկու բարձրագոյն կարգերուն կ'աւանդեմ հետազայ դասերը. Գրականութիւն ու Գրականութեան պատմութիւն՝ ակնհայտ Հնդկի՝ զրականութեանէն. Գեղեցկաբանութիւն ուսումն զոր առաջին անգամն ըլլալով ազգային վարժարանի մը մէջ եռմտոցնցի: Իմաստասիրութիւն և Պատմութիւն՝ իմաստասիրութեան սկսեալ Հնդկաց իմաստասիրական դպրոցներէն: Մանկավարժութիւն, տեսականօրէն աւելորդ է ըսել: Գիտէ՞ք այս դասերն ինչպէս

կ'առանդենք Պէրպէրեան՝ համաժողովարժարանին մէջ և ես՝ Ազգային կեդրոնական վարժարանին մէջ. — հետզհետէ սորվելով այս նիւթերն Եւ այդ ուսումներն ուսանելու կրկին պատճառներ ունինք. նախ զի չենք սորված զանոնք մեր ուսումնաւորած դպրոցին կամ դպրոցներուն մէջ, կամ ա'յն եղանակաւ չենք ուսած որով եղանակաւ մենք կ'ուսուցանենք զայնս. երկրորդ զի գիտութեան դաշտն օր քան զօր կ'ընդարձակի, և ուսուցման եղանակք օր քան օրէ կը բարեփոխին: Ուստի պէտք է միշտ վարդալ, կարգալ, այս, յաւելուած նուազ ցամաք դասի գրքեր. պէտք է անուններ, թուականներ ու սահմաններ դնել որովհետեւ ինչպէս ըսի՝ վարժապետանոցէ մ'ելած չենք ուր առանդելիք ուսումնիս հիմնապէս սորված ըլլայինք. վարժապետանոցէ մ'ելած չենք մեր յիշողութեան մէջ անդուանք, սահմանք ու թուականք թարմ ու կազմ: Վարժապետանոցէ չենք ելած, ա'յն համեմատ պատճառաւ որ վարժապետանոց չենք մտած, և համեմատ ազգի մը քաւակ գտնուելով ուր բարձրագոյն ուսուցիչ մը չը կրնար երբեք մասնագիտութեամբ ապրիլ՝ մասնագիտութիւն չունինք ոչ Պէրպէրեան ոչ Զեր խոնարհ ծառայն, — բաց ի գրականութենէն, և գրականութիւնն այնպիսի բան մ'է, որուն դէմ հայհոյանք կը համարուի (մասնագիտութիւն) բռն. ես՝ իմ մասին՝ կը գրեմ կամ գրականութիւն կ'ընեմ առանց զգալու, ինչպէս որ արեւը կը ծագի կամ (նմանութիւնս անհամեմատ բարձր եղաւ) առուակը կը հոսէ. երբ գիրքերս վարժապետելով երբ հեղինակներ հարցանելով գրեմ, ես հոն չեմ, ես այդ գրածիս մէջ չեմ, այդ գրութեան իմն չէ, խորթ զաւակ է: Այս առթիւ յիշեցնելով սիրելի ազգիս, յիշեցնելով մեր ազգասէր մեծատանց թէ քանի մը տարիէն մեր նախնիները պիտի թուականենք 1900, այսինքն թէ քանի մը տարիէն դար պիտի փոխենք, և թէ տակաւին բան մը չըրինք՝ հասնողէն դասատուներ, մէկ բառով վարժապետ պատրաստելու համար՝ ինչ որ կէս դարէ ի վեր մեր ըրած գործոց առաջինը պարտէր ըլ-

լալ կը յայտարարեմ անկեղծօրէն, համարձակօրէն թէ, կեդրոնական վարժարանին մէջ մեր հասարակութեան յետնամիտ մէկ մասին բարձրագոյն կրթութեան համար գծած անձուկ սահմանին մէջ չեմ պարկակուիր ես. գեղեցկին զիտութեան մէջ տգեղին գեղեցկագիտութիւնն ալ կ'ուսուցանեմ. զրականութեան դասերու մէջ դրական ճաշակին վերջին կերպարանափոխութեանց վրայ ալ զազախար կուտամ բարձրագոյն կարգի ուսանողաց, որոնք արդէն հասուն մտաց ու հզօր կամաց տէր քաւառացի պատանիներ են՝ ծանօթութեանց փարաւի (և հաւատացէք որ այս փարաւին բառը տկար կ'զգամ գրչիս տակ). իսկ իմաստասիրութեան գալով իմաստասիրական բոլոր վարդապետութիւններն ալ կը ներկայացնեմ իրենց, թող դատեն և ընտրեն: Բայց միթէ հնա՞ք էր ինձ՝ ակնարկեալ անձուկ շրջանակին մէջ սահմանափակուիլ. այդպիսի պայմաններու մէջ դասատու մը պիտի կրնամ մտնել կեդրոնական վարժարանի բարձրագոյն դասարանն. — անցեալները («քմահաճոյք» համարեցէք այս ալ) հրաժարեցայ վարժարանէն. բարձրագոյն կարգն երեք անգամ տունս եկաւ, և յայտարարեց թէ որոշած էր իմ տեղս ուրիշ դասատու չընդունիլ: Ոչ իմ փառացոյ համար, այլ անձկամիտներուն ի պատասխանի կ'ըսեմ որ կեդրոնական վարժարանի մէջ սուաջին անգամ ծափահարող դասախօսն ես եղայ: Ինձ անիկայ կրնայ յաջողուել, որ իմ լայնած շրջանակս ընդլայնագունէ. անձկացնել փորձողն երկրորդ անգամ դասարան չը կրնար մտնել:

Գ

Իմ «անգործութեանս» մէջ Օրագիրս ալ կը գրեմ, զոր չեմ անշուշտ յաւակնիր Ամիէլի Ներքին օրագրին. հետ բաղդատել. այլ Օրագիրս մէջ երբ երբեմն յանդգայս գրչիս տակ կուգայ այդ անունն՝ անբաժանաբար վաղամեծ մօրաքեռորդւոյս Ներսէս Ներսէսեանին անունէն, որոյ նուրբ միտքն ա'յնքան կը ճաշակէր «ներքին օրագրին» ներքինական նրբին էջերն: Օրագրէս զատ շատ բան չեմ գրեր. մահ-

ուանէս տուա՞յ գրութիւններս ջնջելու հաս-
տատ որոշումս կը կատարէ՞. ձեռքս, ո՛հ,
քանիօն երջանիկ պիտ'ըլլայի: «մամա՛ս»,
եթէ ձեռքս թիթեռնիկ մը ու չըթռնէս
ձեռքիդ վրայ՝ տառի մը վրայ չընայած դեռ
աչքերս որորիկ ձայնովն յուշիկ վիակէի՝
ընդ միշտ փակէի: . . . Նամակագրութիւն-
ներ ալ կ'ընեմ, որոց մէջ նետած դառ-
նացեալ մարդու հեգնական խօսքերս բեր-
նէ բերան մերթ կը պտտին՝ բառական
նշանակութեամբ առնուելով. և կը յիշեմ
յայնժամ անգլիական վէպի մը դիւցաղնն,
ոյր անագորոյն բանք զայրոյթը կը գըր-
գուն ընկերութեան. մարդոց ամենէն
բարին, որ ամենէն չարը կը ներկայաց-
ուի, քանզի . . . բարեկամս Գառնիկ Ծըն-
տըքեան պիտի յայտնէ՝ ձեզ պատճառն,
նա սր «այդ վէպին ընթերցման պահուն
ամեն մէկ էջի դիւ յիշած է»: — Երբեմն,
հին գրողի վարժութիւնը առջեւս թուղթ
չեղած (այլ մատչաւ միշտ ետեւս եղած)
ատեն, ձեռքս օգին մէջ կը շարժեմ, օգին
մէջ կը գրեմ. անտարակոյս ամենէն գե-
ղեցիկ էջերս որպէս հէ՛զ մայրս հուսկ
յետին օրն ինքնաշարժօրէն՝ ձաջի ժա-
մուն մատուրներն օգին մէջ երերցուց, և
ապա «խաչակնքեց» մատանցն համաշփ
շարժմամբ ձեռացուցած օգային խաչին
չորս ծայրերն աղամանդելով իւր կա-
պոյտ անճառ ժպտին լազուարճներով: . . .
— Գրեւէ չափ աւելի բազցր է սրտին կար-
գալ գրել զորս ընդունած էմ, դողողուն
գրել՝ ոյց կը բաբախին բառերն, ոյք խըն-
կարոյր հերաց խուրձի մը տակ հաղիւ կա-
րող են մերթ ելելէջել. թուղթեր, որոնց
մէկ երեսին վրայ սրտաթիթի խօսքի ծա-
ղիկներ, աւ միւսին վրայ գրախտի ծաղիկ-
ներ՝ թարմ որպէս թէ այգուն քաղուած
ըլլային՝ փրանոյ՝ փափուկ մատամբ ընդ
միշտ հաստատուած քարտին վրայ որ կը
բուրէ՝ ու կը խօսի սիրոյ: . . . անհաստա-
տութեան վրայ:

Ե

Կը խորհիմ ալ իմ «անդործութեան»
մէջ. հակառակ համոզմանս՝ թէ բոլոր
խորհուրդք անկարող պիտ'ըլլան չարքն
սպառել երկրի վրայ, կը խորհիմ ըն-
կերային ու այլ խնդրոց վրայ: Մը-

տածմանցս չղթայն յանգագայ կ'երկարի,
զուգաշափ օղակներ իրարու զօղելով մին-
չեւ որ անհամաշարի ահագին օղակն ան-
կարելոյն, անխուսափելի՝ մարդկային
խորհրդոց չղթայայարութեան հուսկ յե-
տին ծայրն, իւր բարձր արհամարհոտ ա-
նագորոյն ծիծաղին տակ հալեցնէ ման-
րագիտական իմ բոլոր մտածումներս: Կը
չըջեմ այն ժամանակ իմաստասիրութեան
նորոգչին ծանօթ տիեզերավճիռն՝ տարա-
ղովն այնքան դրական քանակագիտական
«Կը խորհիմ, ուրեմն կ'ամ.» և կը բացա-
գանչեմ Տէգառգի հակառակ—կը խորհիմ,
ուրեմն չը կ'ամ. . .

Իրաւունք ունիք, Տէ՛ր իմբազրապետ,
երբ իմ իմաստասիրութիւնս «ժխտական»
կ'անուանէք: Եւ իսկոյն կը յաւելում. —
Շնորհակալ եմ Ձեզ որ կը գրէք. «. . . իր
ժխտական իմաստասիրութիւնը, զոր ն-
դիան չճանչցողները միայն՝ մատախուղի
մէջ ծրարուած կը կարծեն»: Ես կը ստո-
րագծեմ այդ նախադասութիւնը, քանզի
բարեսիրտ բարեխիղճ մարդիկ ոմանք ալ
հաւատացին թէ զառամութեան մէջ ին-
կած է՝ որ կը զառանցէ Տէմիրճիպաշեան՝
ողնածուծի հիւանդութեամբ վարակուած:
Նոյն իսկ հօրեղբայրներէս մին եկաւ օր
մը դիւ առանձնութիւնէս հանելու, և դիւ
անշուշտ տանելու. . . դաքմանատուն ու
խեղճն ամօթահար՝ թէեւ ուրախ՝ մեկնե-
ցաւ, քանի մը ժամ հետս խօսակցելէ յե-
տոյ: Դուն, որ Հրանտ Ասատուրի հետ
ինձ այցելութեան եկար իմ ամենէն յուզ-
եալ օրերէս մին, և ինձ հետ «վիճաբա-
նեցար» իմաստասիրական նիւթոց վրայ
մանաւանդ, ահա կը վկայես թէ «մառա-
խուղի մէջ ծրարուած չէ միտքս»: Եւ եթէ
«մառախուած ակնարկիս» վրայ կը խօսիս,
գիտած ես անշուշտ որպէս գիտած եմ թէ
բու՝ որպէս ըսզմաց՝ աչքը նոյն արտա-
յայտութիւնն ունի ջերմ վիճաբանութեան
մը պահուն: Իսկ «սեւեռած միտքս» սե-
ւեռած է Անծանօթին, մեծ (Ք)ին՝ որ-
պէս քանակագիտական լեզուաւ պիտ'ը-
սէիր դու կամ Նուսուֆեանդ: Գիտես որ
կանուխէն դիւ շահագրգռեցին իմաստա-
սիրական խնդիրը: Առաջին «Փիլիսոփա-

յական բառարանն» հրատարակողն ես եղայ. ես առաջինը պիտի ըլլամ դարձեալ մեր եկեղեցւոյ ներքին թշնամեաց դէմ մարտնչելու համար:

Պօքս կը կնքեմ: Եւ միթէ այսքան բան Ձեզի՞ դէմ գրեցի. իմ «անգործութիւն» Ձեզ համար վերլուծեցի: Ո՛չ, այլ անուանց համար, որոնք չը գիտեն թէ բառերուն նշանակութիւնն անձանց համեմատ կը փոխուի. որպէս փոխուած է դարուց հետ: Այսպիսի տգէտներ հրապարակին վրայ ալ կան, փառք Աստուծոյ: Բմանք վարժապետ իսկ են, կամ հրապարակագիր: Թէ Ձեզ համար «անգործութիւն» ի՞նչ կը նշանակէ երբ խնդիրն Եղիա Տէմիրճիպաշեանի վրայ է, կը բացայայտէք զայն հետագայ պարբերութեան մէջ. «կը կարծեմ որ իր հանգիստը ուրիշներու վատակէն շատ աւելի տաժանելի էր:» Ինչ որ կը համարձակիր՝ Ձեր առաջին վերոյիշեալ հանդիսաւոր բառը տէր քայի ընելով՝ վերաբանել. «կը կարծեմ որ իր անգործութիւնն ուրիշներու գործունէութենէն շատ աւելի գործօն էր:» Ա՛յ հարկ չը կայ բացատրել թէ «գործատեացութիւն» բառն ալ զոր առ ձեզ մասնաւոր գրի մը մէջ գործածած եմ և զոր դուք կը կրկնէք ի հրապարակի, իմ գրչիս տակ ի՞նչ նշանակութիւն ունի: Հոսկ բան հատուածոյց առաջին բանին պատասխան: «Տարի մը կայ Եղիա Տէմիրճիպաշեան սրտողած էր ամենուս հետ, մարդոց ու Աստուծոյ դէմ:» Ես միշտ սրտողած եմ, Տէ՛ր խմբագրապետ, ոչ Ձեզ հետ, այլ ա՛յն մարդոց հետ առ հատարակ՝ որոնք կանխորոշութիւն ունին, կամ ժխտական բացատրութեամբ «պարկեշտութիւն» (բառին բարբարային նշանակութեամբ, սեռ աշխին ինձ չը վերաբերիր քննել) պարկեշտութիւն չունին:

Իսկ Աստուծոյ դէմ սրտողած ըլլալէ հետո, հոգիս ու միտքս յաւիտեան յառած են առ ԱՍՏՈՒՍՄ:

ԵԶԻՍ. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ՆՇԱՆԱԾՆԵՐ

Ժամանակին՝ անծայր զետոյն արընետակ՝ Անոր կողէն քշեալ կապոյտ մէկ վտակ, Ափունքները պարտէզներով զարդարուն՝ Հովտաց մէջէն ժպտի կ'անցնի զարարուն. Ու այս կողմը լոկ ծաղիկներ կը բուսնին, Հոս գարուն է գեղածիծաղ՝ մշտածին, Օղը՝ հովը միշտ նեղաշունչ՝ խնկարոյր, Ու երկինքը միշտ պայծառ է եւ համրոյր, Հոս ման կուգան գողոն ավշիկներ որ գոյգ գոյգ Սիրով կապուած են պատանեաց հետ առայգ. Նշանածներ են ամենքն ալ երջանիկ, Յափշտակուած երազներով գեղեցիկ. Եւ աչքերնին սեւեռած են լուսաւոր Այն ծառերուն որ տառանին մեղմօրօք Դիմացի կողմը՝ չի վառվառ՝ զունագեղ Պտուղներով մեղրածորան եւ համեղ. Հոն կանգնած է ամուսնունեալն սուրբ տաճար Որուն շողայ օսկի գմբէժն օղապար, Շուրջը շարուած են մեծ եւ փոք վիլաներ, Ուր ծանծաղան բաղդուորներ մեղկասէր, Իսկ աւելի հեռուն Թաղեր կան անշուրթ, Ժպիտներուն փոք յաջորդին արտասուր, Տեղան երգեր եւ անէծքներ հաւասար, Բաժակ պարպեն մէկտեղ նախանձն ու հանձար, Բայց այս իրայ տգեղ՝ այնքան ճշմարիտ Ձեն հաւատարմ նշանածներ միամիտ, Եւ արգիլուած պտղոյն փայլէն արտաքին, Հըրպուրդուած՝ միշտ հոն դիմել փափաքին, Երեսց սիրոյ անոյշ ժամերն ալ գոհեն, Անձանօթին՝ երբեմն քրակտ, միշտ գեհեն, Եւ ամեն գոյգ առաջ անցնիլ կը շտապէ նեղ կամուրջէն որ այդ ավերը կապէ, Կողարով իսկ կ'անցնին ոմանք անհամբեր, Խորամանկ անէր որքան փ զիրենք է խաբեր, Նշանածներ, Եւր փափառ կ'աւանգին, Սուղ վայրկեաններ անը հիացման՝ չունին զին երկնաբացիլ այդ ժամերուն մէջ անմեղ, Կ'ազնուանան զգաթումներ սիրազեղ, Սիրտն է՝ գեղատ հոգին ներսը աւելի, Շուտ փառատի՛ վիշտը, Դիւր կը հալի, Մի՛ աւտորար, այդ վայելքներն են անմահ, Ճաշակեցէր կաթիլ կաթիլ գերդ ազահ, Թո՛ղ նախանձին որը չեն խմած այդ նեկտար, Մինչ քերթոյն ալ գոյ կը ժպտի զաղտաբար:

Մ. ՆԱԽՄԵՆ

ԻՍ ԱՆՍԵՂ ՀՊԱՐՏՆԵՐՍ

Պօլսէն վերադարձած և իր ծննդավայր Իշխանիզում գիւղը հասած է Պետուն։ Բնականաբար դրկիցներուն և այլ բարեկամաց համար պօլսական նուէքներ տարած է հետը։

Այլա կրպոյին՝ յատկացուցած է տուփ մը շաքար, զոր կը տանի կը յանձնէ։

— Ի՞նչ է, Պետո։

— Շէքար ի. Սթամբուլէն քէ արմազան իմ բերեր որ ուտես։

— Ահ, չէքա՞ր ուտեմ, ինչե՞ր էլ կ'ասես ծիկ. պիլէ Աստուած գիտէ որ ես աստորժակ չունեմ նոյն իսկ սոխ ուտելու, կը պատասխանէ մեր աղա կրպօն։

Կը խնդա՞ր մեր կրպոյին վրայ, բայց մենք Վիքթօր Հիւկոյի հովեր առնելու պէտք մը չունինք ըսելու համար թէ ամենէն թանկագին ու խորիմաստ բարոյականը ամենէն տխմար խօսքերուն մէջն է յաճախ։

Աչքի առջեւ առնելով կրպոյին յիշեալ պատասխանը, կը տեսնենք թէ այդ մարդը մինչեւ վերջը գիտցած է իր վիճակէն վեր չելլալ, վերմակէն դուրս չհանել իր ոտքերը, իր իւղով տապկուիլ, չզատուիլ իր շինական կիանքէն, մնալ պապեհական երգիքին ներքեւ, իր սիրելիներուն մէջտեղ, իր զաւակներուն քով։

Կարծենք թէ լաւագոյն է այս՝ քան ինքնաճանաչութեան պակասութենէ, կամ ո՛ր և է չափազանցութեան պատճառով ընկճուիլ պարտքերու տակ, ստիպուիլ Պօլիս գալ և տարիներով պատաղիլ սեւերեւ ստիպեամբ շաքարին ինչ ըլլալը ճանչնալու, համը առնելու համար։

Պօլսոյ խաներուն մէջ մըլտած շաքարակեր Օհանին հետ բազմատմամբ՝ երջանիկ չէ՞ մեր սոխակեր կրպօն։

* * *

Անցեալները Պօլսոյ հայ թերթի մը մէջ (Արեւելք) չէ) իբրեւ հանելուկ առաջարկուած էր՝ թէ՛ տակառներու և թէ՛ գինիի երեք հոգւոյ հաւասար բաժին հա-

նել 24 տակառէն որոյ ութը դատարկ, ութը կիսովին լեցուած, և մնացեալ ութն ալ լեւիլեցուն են եղեր գինիով։

Մենք հիշուեցանք ի սրտէ կարգալով յիսունի չափ նքրամիտ հայերու անուններն որք այլ և այլ եղանակաւ լուծած են եղեր այդ կորդեան հանգոյցը։

Ահա նմանօրինակ դժուարութիւն մը.

Վանայ Արտամէտ գիւղացի Սաբգօն վրան գոց կողով մը չալկած կը տանէր դէպ ի բաղաք։ Ճամբան կը պատահի Յուսօյին, որ կը հարցունէ իրեն թէ ի՞նչ է կողովին մէջինը։

— Դու զիդինք գիտցիր. թէ պիտցար՝ անկէջ ողկոյղ մը կուտամ։

— Եւրէպ, իսողով չէ՞ կ'ասեր։

— Հապա՛ մեռնեմ քէ. դու ի՞նչի գիտցար, ծոցդ երազահա՞ն ունես աճէպ։

* *

Մրտօյին սիրուհին։

Վանայ Առտէր կղզւոյն բնիկներէն է մեր դաւարարեւ Մրտօն, որ Պօլսոյ մարսատան մէջ բեռնակրութեամբ կ'դբաղի ցորեկը. իրիկունները կ'երթայ գիշերել կերպասավաճառի մը խանութը, իբրեւ պահապան։

Իր սիրուհւոյն, գեղեցիկն Շահանի շողջողուն աչաց հուրը իր սրտին միտած պար մըն է անբաժան. իր սիրտը կը բեռեկուի յարաժամ, բայց որչափ հաճոյս ի բեռեկում. այդ վիթխարի կուրծքը մարմնաջելով ներսիդին տրոփելով, յօժարակամ անձնատուր կ'ըլլայ միշտ Շահանի յիշատակին կեղեքանաց։

Այս յիշատակին շնորհիւն է որ երեք չորս տարիէն, սրտահար Մրտօյին մէջքի կամարը ուռեցաւ 25-30 սակով. ա'լ չէ կարող դիմանալ Շահանի հրայրքին. երկիր դառնալու համար հրաման կ'առնէ կերպասավաճառէն, որ, «մինթան» մը չինելու համար տպածոյի ֆաթուրաներ կը նուիրէ Մրտօյին։

Մրտօն ամիսէ մը կը հասնի Առտէր կղզին. հետեւեալ օրը սոնգանօք կը պարտի գիւղին մէջ ֆաթուրայէ «մինթան»ը հագած։ Աւելորդ է գրել որ Մրտօյին քայլերը ամենէն առաջ ուղղուեցան Շա-

հանի տան կողմը. Շահան պարտեզն է . վարդենի մը կը խնամէ ուշագիր :

Սիրահարութենէ հասկցող ամեն ոք գուցէ բնագումար գիտէ թէ սիրուհւոյն ուշագրութիւնը գրաւելու համար բարձրաձայն պոռալը անճարակի գործ է . ի՞նչ ընել ուրեմն . պոռալ չըլլար , Շահանի քով երթալու համար ալ մացառներէն չատ աւելի դորաւոր արգելք մը կայ . Պէլէջը, Շահանի հուժկու գամբուը ներկայ է հոն :

Ամօթ չէ՞ որ շունէ մը վախնայ սիրահալ Մրտօն . կ'առնէ գետնէն քար մը ու կ'արձակէ շան վրայ . շունն է կ'ուրիշ հաշիւ և կանչուըստել . այն ատեն քսգին կը դառնայ նազելի գլուխը Շահանին . կը տեսնէ իր սիրահարին գէմբը, նա'և խայտաբղետ «մինթան»ը . ինքը վա՛ր կը մնայ անկէ . ինքն ալ իր մատին անցուցած է քսան փարանոց կեղծ մատնի մը : Շահան այդ մատանակիր ձեռքը շարժելով կը հարցնէ .

— Ինչի՞ քար կը թալլես մեր շան :

Սիրուհւոյն պչրանքը չի խուսափիր սիրահարին աչքերէն . կ'ուզէ փոխադարձ նազանք մը ընել անոր :

— Հապա քար չը թալլեմ որ էսա Սթամբուլայ նախշուն խալա՛վը խղտէ, կը պատասխանէ Մրտօն ամենայն հպարտութեամբ ցուցամասը «մինթան»ին վրայ սեւեռելով : Աստուած ձեր կանանչ, ձեր նախշուն արեւը պահէ, իմ անմեղ հպարտներս :

ՈՍՏԱՆԻԿ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա. Զ. Դ. Ա. Յ. Ի. Ն.

Կարինի պատրիարքական փոխանորդ Ղեւոնդ եպիսկոպոս Շիլմանեան վիճակին առաջնորդ ընտրուել է տեղւոյն Գաւառական Ժողովին կողմէ :

— Վանայ Ալիւր գիւղի Նարեկացի անուն վանքին վարդապետն ու իր արքանեակները մեծ գործունէութիւն ցոյց տուած ըլլալով վանքապատկան կալուածները, վաճառելու մատին, գիւղացիները Մ.

Պատրիարքին ուշագրութիւնն հրաւիրած են այս ապօրէն գործին վրայ :

— Կիրակի օրը, Մաքրիգիւղի մէջ Ազգ. վարժարանի մը բացումը կատարուեցաւ ի ներկայութեան Ս. Պատրիարքին և այլ երեւելեաց : Վարժարանին անունը դրուեցաւ Տատեան, ըստ որում եղած 1300 ոսկի ծախքին 750ը Տատեան Յովհաննէս պէյի կողմէ կտակուած էր :

— Ուսումնական Խորհուրդի ատենապետ Ռեթէոն Էֆէնտի Պէրպէրեանի կողմէ պատրաստուած «Ազգ. Եպիսկոպոսութեան կազմական կանոնագիր»ը, որ մատուցուած էր Քաղաքական Ժողովին, յետ քննութեան, ընդունելի դատուեցաւ և յանձնուեցաւ Ուսումնական Խորհուրդին, որ անմիջապէս ի գործ դնէ զայն : Պէրպէրեան Էֆէնտի այս գնահատելի աշխատութիւն արժանի է գովեստի և շնորհակալութեան :

— Խառն Ժողովն իր վերջին նիստին մէջ հնգամեայ նոր շրջանի մը համար վերահաստատեց Իզմիրեանց կտակային յանձնաժողովն, որ հրաժարական մատուցած էր՝ պայմանաժամը լրացած ըլլալուն :

— Պաշտատի պատրիարքական փոխանորդ Արիստակէս եպիսկոպոս Տիարպէրի մէջ առաջնորդի ընտրութիւն կատարել տրուած և գաւառական Լնդհ. Ժողովին Խեղեկագիրը զրկած էր Քաղաքական Ժողովին : Ընտրութիւնն օրինաւոր դատուելով Մեղքիսեղեկ եպիսկոպոս Մուրադեանց առաջնորդ կարգուեցաւ սոյն վիճակին :

— Խառն Ժողովն որոշեց Վարազայ վանքին ժառանգաւորներու վարժարանին յատկացնել այն չորս հարիւր արծաթ բուլլին, զոր կտակած է Նոր Նախիջեւանցի հանգուցեալ Միքայէլ Յովակիմեան Գարասուլեանց :

— Փասուլեաճեան անվհատ կը շարունակէ հետեւիլ այն շաւղին զոր ինք գծեց թատերական ասպարէզին մէջ : Վաղեմի թատերապետն իր ներկայացման նիւթ ընտրած է այս գիշեր Մուլէհի երեմի ԱԿԱՅԱՆ ՀԻԻԱՆԻԸ, զոր Մաքրիգիւղից պատեհութիւն պիտի ունենան վայելելու իրենց գիւղին թատրոնին մէջ : Մաքրի-

գիւղացիք անշուշտ չպիտի ուզեն իրենց քաջաբերը զլանալ Ֆասուլեաճեանին, և այս մասին վար մնալ Բերացիներէն և Գատը-գիւղացիներէն:

Ն Ե Ր Ք Ի Ն

Արհաւիրքի մէջ է Մալաթիա: Երկրաշարժի ցնցումները մեծամեծ աղէտներ պատճառած են հոն: Հիւսնիմանսուրի մէջ, փլատակներու տակէն 22 մարդոց դիակներ հանուեր են: Երկրորդ երկրաշարժին՝ Մալաթիոյ 3500 տուններուն մէկ երրորդ մասը բոլորովին հիմնայատակ եղած է: Հայոց եկեղեցիքն ու դպրոցը մասամբ փլեր են: Շրջակայ ինը գիւղերուն մէջ երկուսեռէ 33 մարդեր մեռած են, մարդ մը փրաւորուած է: 160 տուններ փլած և 326 անասունք կորած են: Ուրիշ տասն և վեց գիւղերու մէջ երկուսեռէ հարիւր քսան և հինգ անձինք մեռեր, 279 տուններ փլէր և 1106 անասունք կորեր են: Վեհ. Սուլթանը բարեհաճած է 500 ոսկի շնորհել: Քարբերդի և Տիարպէրիի նահանգներէն 101,000 դր. նպաստ ղրկուած է: Ո՞ր սիրտ չուզեր օգնել այս ստարաբախտիկ մարդոց:

—Ասկից վերջը գոյութեան և ոճիրներու համար ամբաստանեալ և դատաւարուեալ այն անձինք որք Պուլկարիա փախած են, պիտի յանձնուին օսմ. կառավարութեան:

—Հանրային Պարտուց վարչութեան ֆրանսական պատուիրակ Պէքէ՛ հրամարն երկուշարժի օրը, իր կարգին, ըստանձնեց վարչական խորհուրդին նախագահութիւնը՝ անգլ. պատուիրակ Պ. Բայլարտի տեղ: Երուն պաշտօնը լրացած է:

—Թէրէ Պաշէի արկածեալ տունին՝ ճարտարապետներուն դատն աւարտեցաւ: Թէտէսի մէկ տարուան բանտարկութեան դատաւարանցաւ Մակրօքորտաթօ՝ Հանրային իրաւանց դատէն անպարտ արձակեցաւ, միայն թէ՛ անձնական դատախազք եթէ արեան գին պահանջեն, ազատ են Շէրիի դատարանաց դիմելու: Ֆրանչէսքօ և Միխայ ազատ արձակուեցան:

—Նախարարաց Խորհրդոյ որոշմամբ, տեղական ցորեններէ և ալիւրներէ առնուած ներքին մաքսատուրքը շնչուած է:

—Եգիպտոսի նախարարապետ Բիազ փաշաի որդին Մահմուտ Բիազ փաշա ներքին գործոց նախարարութեան խորհրդական կարգեցաւ փոխանակ Շուքրի փաշաի, որ Սուէզի ջրանցին կառավարիչ անուանեցաւ:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Ֆրանսացի փաստաբան Պ. Շըվալիէ, ֆրանսական պատուիրակ Եգիպտոսի Հանրային Պարտուց վարչութեան մէջ, Սուէզի ընկերութեան պատուիրակ կարգուեցաւ Պ. տը Լեսէփսի տեղ:

—Համադգային առողջապահական ժողովը բացուեցաւ ի Տրեզտա, քոլեալի դէմ համադգային միջոցներ ձեռք առնելու համար: Բրուսիոյ դեսպան և պատուիրակ Տվէնհոֆ կոմս ասենապետ կարգուեցաւ:

—Բանամայի կաշառակերութեան դատին մէջ դատուողներն են. կաշառակերք՝ Պէրալ՝ ծերակուտական, Տիւկէ տը լա Ֆորոնրի՝ երեսփոխան, Անդոնէն Բրուսը՝ երեսփոխան, Պալհօ՝ նախկին նախարար հանրօգուտ շինութեանց, Սան-Լըռուա՝ նախկին երեսփոխան, Կոպրոն՝ նախկին ծերակուտորդ. կաշառատուք՝ Շաուլ տը Լեսէրս՝ վարիչ Բանամայի ընկերութեան, Մարիուս Ֆոնթան՝ վարիչ Բանամայի ընկերութեան, Առթոն՝ միջնորդ, Պոնտէն՝ միջնորդ:

—Պ. Պուռժուա, դատական նախարար Ֆրանսայի, որ պահ մը հրաժարական տուած էր իր պաշտօնէն՝ Բանամայի գործին առթիւ, յօժարեցաւ վերստանձնել իր պաշտօնը, մաքուր եղնելով տիկին Բոթիի ամբաստանութեան մէջէն:

—Բանամայի կաշառակերութեան դատին վիշտներուն ունկնդրութիւնը վերջացաւ և խօսելու կարգը փաստաբաններունն է: Բնդհ. դատախազը պահանջեց արին ամբաստանեալներուն դատաւարտութիւնը, մանաւանդ Պ. Շաւլ տը Լեսէրսի որ կաշառատու մըն է և ոչ թէ բռնութեան զոհ մը:

—Բանամայի դատին մէջ ընդհ. դատախազն արդարացուց Պ. Պ. տը Ֆրէսի-նէի, Ֆլոքէի և Բլէմանսոյի միջամտութիւնը Պ. Շ. տը Լեսէրսի մօտ. զի անոնք ուրիշ բան չեն ըրած բաց եթէ խորհուրդ տուած են առաջին առնուլ դատի մը որ անանկութիւն և կործանում կրնար առաջ բերել:

ԱՐՏՈՆԱՏԷՐ

Կ. Ս. ԻԻԹԻԻՃՅԱՆ

Ի Տպարանի ԱՐԵՒՆԻՔ ԵՒ ՄՈՍԻՍ ԲՆԱԳՐԱՅ